4031

# ԲԱՆԱԼԻ

# ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Մեսրոպեան տառից

որ է

ԱՅԲՈՒԲԵՆԱՐԱՆ ԵՒ ՀԵԳԵՐԷՆ

Հայկեան լեզուի

BIBLIOTECA CENTRALĂ * ARMEANĂ * BUCUREŞTI



ԵԱՇ.

Յամի Տեառն 1847.

Tinографіа: Інстітутул Албінеі.

BIBLIOTECA CENTRALA
ARMEANĂ
BUCUREŞTI

150

# ԲԱՆԱԼԻ

## ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Մեսրոպեան տառից,

որ է

ԱՅԲԲԵՆԱԲԱՆ ԵՒ ՀԵԳԵՐԷՆ

Հայկեան լեզուի:

---

Տիպ առաջին:



ԵԱՇ,

Յամի Տեառն 1847:

---

Інстітѹтѹл Албінеі.

BIBLIOTECA CENTRALA * ARMEANA * BUCUREŞTI

[illegible]

[illegible]

[illegible] 201

[illegible]

[illegible]

## Յարգի ընթերցողներուն։

Ինչպէս որ ամէն մէկ ժողովուրդ իրեն ազգին բարեացը համար հարկաւոր եղածները մտածելու և գործքով կատարելու ալ ջանք ընելու պարտական կը սեպուի, նոյնպէս ալ Մոլդավիային մէջը բնակած մեր հայազգի ժողովրդեան բարեսէր անձինքը՝ ազգին ուրիշ օգտակար գործքերուն քովը՝ հարկաւոր սեպեցին հայկական տպագրութեան Յաշ քաղաքը հաստատութիւնն ալ, որուն լոյսը անցեալ օրերը մասնաւոր ծանօթութեամբ հրատարակուեցաւ։ Այս փոքրիկ գրքոյկս այն տպարանին առաջին պտուղն է.

որն որ դպրատուն նոր մտած տղայոց համար հար-
կաւոր եղած կերպով շինուած կրնայուի :

Նաեւ զի, շատ դիպուածներէն փորձ տեսնուեցաւ որ՝ տղան գրերը դեռ չճանչցած՝ Քերականին և Հեգերէնին մէկ քանի թերթը և կամ կէսը կրպատուէ, այնպէս որ ծնողքը կրստիպին մէկ՝ երկու՝ և կամ աւելի ալ Քերականի տակ վճարելու՝ մինչև որ տըղան գրերը ճանչնայ: Ասոր այս գրքոյկիս քովը հատ մօգաղաթի կպած զատ թերթի մը վրայ միայն Այբուբէնքը թէ բոլորագիր և թէ երկաթագիր տպուեցաւ. որպէս զի տղան առաջ անոր վրայ գրերը աղէկ սորուելէն և ճանչնալէն վերջը՝ ըսկի այս գրքոյկիս մէջը ընթերցանութեան ուրիշ պիտանացու կարգը և կանոնը սորուելու :

Երկրորդ, շատ դպրատուններ մինչև հիմա գործածուած Այբբենարանք և Հեգերէնք անկարելի էր որ տղայ մը մէկ տարուան մէջը լմնցրնէր. և միայն ընթերցանութեան սկզբունքը սորուելու համար՝ երկու տարի, կամ աւելի ալ կաշխատէր, և ուրիշ գիտութիւններով շահելու ժամանակին մէկ մասը պա-

րապ տեղ կանգնէր : Սակայն այս գրքոյկս այնպէս յարմարցուցած և բաժնուած է, որ արդիւնաւոր վարպետը դիւրաւ կրնայ մէկ տարուան միջոցը տասը մէջի եղանակներով տղան վարժելու :

Երրորդ, ջանացինք որ տղան կարդալու սկսածին պէս՝ սորվի և հասկընայ իրեն ինչպիսի ազգէ՝ ինչ երկրէ և որ աւազանին որդին եղածը. որպէս զի չըլլայ թէ անխելք ազգատեաց մարդիկներուն օրինակին հետեւելով՝ ամօթ սեպէ իրեն ինչ ազգէ եղածը օտար ազգաց առջեւ համարձակ խոստովանելու :

Չորրորդ, գրքոյկիս վերջը դրուեցաւ ուլահերէն Այբուբենքը՝ ամէն մէկ տառին հնչմանը հայերէն մեկնութեամբը. ինչու որ տղան իր ազգին լեզուին ընթերցանութեան սկզբունքը սորվելէն ետքը, աս կողմերուս համար իրեն հարկաւոր եղած սկսելու լեզուն ուլահերէնը ըլլալով, կարող ըլլայ տասը մէջը այն լեզուին գրերն ալ ճանչնալու և անոնց ձայնը իմանալու :

Հինգերորդ, հասարակ ընթերցանութեան կարգը դրուեցաւ տէրունական աղօթքն ալ, հաւատոյ հանգանակը, և այլն. որպէս զի բարեպաշտ վարչեանե-

որ ջանան այն աղօթքները տղայոց պզտիկութեան ժամանակը անխալ իրենց սորուեցընելու , և Աստուծոյ երկիւղը ու գթութեանը անհուն ողորմութիւնը անոնց միտքը տպաւորելու ։ Ուստի մեզի ալ մեծ շնորհակալութիւն ըրած կըլլային վարպետները՝ թէ որ ջանային տղայոց մտքէն ծեծի պատժին ահը վերցընելու , և անոր տեղը Աստուծոյ երկիւղը և մարդկան ամօթը փոխադրելու , և այս ճամբով ճըշմարիտ ազգասէրի մը պէս զանազան օգտակար գիտութիւններով զանոնք կրթելու ։

---

BIBLIOTECA CENTRALĂ * ARMEANĂ * BUCUREŞTI



Դաս. ա:

# ԱՅԲՈՒԲԵՆՔ

## Բոլորագիր:

ա. բ. գ. դ. ե. զ. է. ը. թ. ժ. ի. լ.
խ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. ո.
չ. պ. ջ. ռ. ս. վ. տ. ր. ց. ւ. փ. ք.
և. օ. ֆ:

BIBLIOTECA CENTRALĂ * BUCUREŞTI * ARMEANA

Դաս. բ:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | ե | է | ը | ի | ո | օ | ու | իւ |
| աբ | եբ | էբ | ըբ | իբ | ոբ | օբ | ուբ | իւբ |
| բա | բե | բէ | բը | բի | բո | բօ | բու | բիւ |
| ագ | եգ | էգ | ըգ | իգ | ոգ | օգ | ուգ | իւգ |
| գա | գե | գէ | գը | գի | գո | գօ | գու | գիւ |
| ադ | եդ | էդ | ըդ | իդ | ոդ | օդ | ուդ | իւդ |
| դա | դե | դէ | դը | դի | դո | դօ | դու | դիւ |

Համար. Գ:

ե է ը ի ո օ ու իւ ա

եղ էղ ըղ իղ ող օղ ուղ իւղ աղ

ղե ղէ ղը ղի ղո ղօ ղու ղիւ ղա

եթ էթ ըթ իթ ոթ օթ ութ իւթ աթ

թե թէ թը թի թո թօ թու թիւ թա

եժ էժ ըժ իժ ոժ օժ ուժ իւժ աժ

ժե ժէ ժը ժի ժո ժօ ժու ժիւ ժա

Համար. Դ:

է ը ի ո օ ու իւ ա ե

էլ ըլ իլ ոլ օլ ուլ իւլ ալ ել

լէ լը լի լո լօ լու լիւ լա լե

էխ ըխ իխ ոխ օխ ուխ իւխ ախ եխ

խէ խը խի խո խօ խու խիւ խա խե

էծ ըծ իծ ոծ օծ ուծ իւծ ած եծ

ծէ ծը ծի ծո ծօ ծու ծիւ ծա ծե

Համար. Ե:

ը ի ո օ ու իւ ա ե է

ըկ իկ ոկ օկ ուկ իւկ ակ եկ էկ

կը կի կո կօ կու կիւ կա կե կէ
ըհ իհ ոհ օհ ուհ իւհ ահ եհ էհ
հը հի հո հօ հու հիւ հա հե հէ
ըձ իձ ոձ օձ ուձ իւձ աձ եձ էձ
ձը ձի ձո ձօ ձու ձիւ ձա ձե ձէ

Դաս. դ:

ի ո օ ու իւ ա ե է ը
իղ ող օղ ուղ իւղ աղ եղ էղ ըղ
ղի ղո ղօ ղու ղիւ ղա ղե ղէ ղը
իճ ոճ օճ ուճ իւճ աճ եճ էճ ըճ
ճի ճո ճօ ճու ճիւ ճա ճե ճէ ճը
իմ ոմ օմ ում իւմ ամ եմ էմ ըմ
մի մո մօ մու միւ մա մե մէ մը

Դաս. ե:

ո օ ու իւ ա ե է ը ի
ոյ օյ ույ իւյ այ եյ էյ ըյ իյ
յո յօ յու յիւ յա յե յէ յը յի
ոն օն ուն իւն ան են էն ըն ին

նո նօ նու նիւ նա նե նէ նը նի
ոշ օշ ուշ իւշ աշ եշ էշ ըշ իշ
շո շօ շու շիւ շա շե շէ շը շի

Համար. Ը:

օ ու իւ ա ե է ը ի ո
օչ ուչ իւչ աչ եչ էչ ըչ իչ ոչ
չօ չու չիւ չա չե չէ չը չի չո
օպ ուպ իւպ ապ եպ էպ ըպ իպ ոպ
պօ պու պիւ պա պե պէ պը պի պո
օջ ուջ իւջ աջ եջ էջ ըջ իջ ոջ
ջօ ջու ջիւ ջա ջե ջէ ջը ջի ջո

Համար. Թ:

ու իւ ա ե է ը ի ո օ
ուռ իւռ առ եռ էռ ըռ իռ ոռ օռ
ռու ռիւ ռա ռե ռէ ռը ռի ռո ռօ
ուս իւս աս ես էս ըս իս ոս օս
սու սիւ սա սե սէ սը սի սո սօ
ուվ իւվ ավ եվ էվ ըվ իվ ով օվ
վու վիւ վա վե վէ վը վի վո վօ

Համար. Ժ։

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| իւ | ա | ե | է | ը | ի | ո | օ | ու |
| իւտ | ատ | ետ | էտ | ըտ | իտ | ոտ | օտ | ուտ |
| տիւ | տա | տե | տէ | տը | տի | տո | տօ | տու |
| իւր | ար | եր | էր | ըր | իր | որ | օր | ուր |
| րիւ | րա | րե | րէ | րը | րի | րո | րօ | րու |
| իւց | աց | եց | էց | ըց | ից | ոց | օց | ուց |
| ցիւ | ցա | ցե | ցէ | ցը | ցի | ցո | ցօ | ցու |

Համար. ԺԱ։

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ա | է | իւ | ո | ե | ը | օ | ի | ու |
| աւ | էւ | — | ու | եւ | ըւ | — | իւ | — |
| ւա | ւէ | ւիւ | ւո | ւե | ւը | ւօ | ւի | ւու |
| ափ | էփ | իւփ | ոփ | եփ | ըփ | օփ | իփ | ուփ |
| փա | փէ | փիւ | փո | փե | փը | փօ | փի | փու |
| աք | էք | իւք | ոք | եք | ըք | օք | իք | ուք |
| քա | քէ | քիւ | քո | քե | քը | քօ | քի | քու |
| աֆ | էֆ | իւֆ | ոֆ | եֆ | ըֆ | օֆ | իֆ | ուֆ |
| ֆա | ֆէ | ֆիւ | ֆո | ֆե | ֆը | ֆօ | ֆի | ֆու |

Համար. ժբ :

Երկաթագիր :

Ա. Բ. Գ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ.
Ժ. Ի. Լ. Խ. Ծ. Կ. Հ. Ձ. Ղ. Ճ.
Մ. Յ. Ն. Շ. Ո. Չ. Պ. Ջ. Ռ.
Ս. Վ. Տ. Ր. Ց. Ւ. Փ. Ք. Օ. Ֆ:

Համար. ժգ :

Միավանկ բառեր :

Անդ. Բեր. Գիծ. Դէզ. Երգ. Զոհ.
Էջք. Ըստ. Թագ. Ժամ. Ինձ. Լար.
Խէժ. Ծառ. Կաղ. Հաւ. Ձէթ. Ղէկ.
Ճառ. Մաղ. Յօդ. Նաւ. Շար. Ոսպ.
Չափ. Պետ. Ջիլ. Ռահ. Սաթ. Վէպ.
Տիկ. Րոպ. Ցօղ. Փիղ. Քոս:

Համար. ժդ :

Այբ. Բերդ. Գինտ. Դոյլ. Երգ. Զէնք.
Թոյն. Ժայռ. Ինչք. Լինդ. Խոյր. Ծայր.

Կոնք. Հիւր. Ձիւթ. Ղեակ. Ճանճ. Մայր. Յօնք. Նուշ. Շարժ. Ուրդ. Չորք. Պոնտ. Ջերմ. Ռուփ. Սայլ. Վէրք. Տենդ. Րանք. Ցուլ. Փուշ. Քայլ:

Համար. ԺԵ:

Երկավանկ բառեր:

Ար-քայ. Բող-բոջ. Գա-րի. Դես-պան. Եր-կիր. Զան-գակ. Է-րէց. Ըն-կեր. Թա-գար. Ժիժ-մակ. Իշ-խան. Լե-զու. Խո-զան. Ծո-րակ. Կա-ղին. Հան-դէս. Ձա-գառ. Ղամ-բար. Ճա-կատ. Մո-խիր. Յի-սուս. Նի-զակ. Շե-րամ. Ոլ-գան. Չու-խայ. Պաշ-տօն. Ջու-թակ. Ռե-հան. Սա-կառ. Վա-հան. Տո-կոս. Ցա-մաք. Փո-ղոց. Քա-ղաք:

Համար. ԺԶ:

Եռավանկ բառեր:

Ա-րա-րատ. Բա-նա-լի. Գան-ձա-պետ.

Գա-տաս-տան. Ե-րի-վար. Զի-նա-տուն. Ը-ա-կան. Ըն-կո-ղին. Թա-գու-հի. Ժա-մա-գործ. Ի-մաս-տուն. Լու-սե-ղէն. Խո-հա-կան. Ծի-րա-նի. Կի-նա-մոն. Հայ-աս-տան. Ձայ-նա-ւոր. Ղէ-կա-վար. Ճե-մա-րան. Մաք-սա-ւոր. Յե-նա-րան. Նիր-կա-րար. Շու-տա-րան. Ոս-տի-կան. Չա-րա-խօս. Պար-տիզ-պան. Ջեր-մե-ռանդ. Ռա-բու-նի. Սառ-նա-պատ. Վե-հա-փառ. Տեն-չա-լի. Րախ-ճա-կան. Ցօ-ղա-լից. Փու-թա-ջան. Քա-հա-նայ:

### Համար. ԺԷ:

### Քառավանկ բառեր:

Ա-ւե-տա-րան. Բա-րե-պաշ-տօն. Գայ-թակ-ղու-թիւն. Դի-ւա-նա-պան. Ե-րա-նե-լի. Զար-մա-ցա-կան. Է-ա-կու-թիւն. Ըն-դու-նա-րան. Թա-փա-ռա-կան. Ժա-մա-վա-ճառ. Ի-րա-ւա-խօս.

Լայ-նա-ծա-ւալ. Խո-նար-հու-թիւն. Ծան-րա-բա-րոյ. Կաս-կա-ծե-լի. Հա-նա-պա-զորդ. Ջա-խոր-դու-թիւն. Պամ-բա-րա-փայլ. Ճա-նա-պար-հորդ. Մահ-կա-նա-ցու. Յի-շո-ղու-թիւն. Ներ-բո-ղա-կան. Շո-ղո-մա-րար. Ո-ղոր-մու-թիւն. Չո-րեք-կու-սի. Պար-կեշ-տա-սուն. Ջու-թա-կա-գործ. Ռամ-կավա-յել. Սե-ղա-նա-տուն. Վա-ւե-րա-կան. Տեառ-նա-գրու-թիւն. Րա-բու-նա-բար. Ցո-լա-ցու-թիւն. Փո-խա-դրա-կան. Քա-ղա-քա-վար:

---

Համար. ժբ:

Աստուած կըպատուիրէ որ սիրեմ հայրս եւ մայրս, որ պէսզի երկայն ապրիմ աշխարհիս վրայ: Աս կըպահեմ աստուծոյ պատուէրը, եւ կուզեմ հայրըս ու մայրըս սիրել եւ յարգել, եւ անոնց ամմէն ըսած-

ները կատարել ։ Սիրելի հայրըս պատուիրեց ինծի որ ամէն օր դպրոցատուն երթամ, եւ ջանամ համարըս աղէկ սորվելու, եւ ուրիշ տղայոց հետ չերթամ խաղալու. ես միտքս կդնեմ սիրելի հօրըս հրամանը, եւ անոր ըսածները գործքով կուզեմ կատարելու. ինչու որ ինքը ինծի ամէն օր հաց եւ ուտելիք կը բերէ, եւ գեղեցիկ ըզգեստներ կը շինէ ։

Դաս. ԺԹ ։

Սիրելի մայրըս կը հոգայ միշտ որ հագուստս մաքուր ըլլայ, երեսս լուացուած եւ գլուխս սանտրուած. ինծի կը պատուիրէ որ առտու իրիկուն աղօթք ընեմ, որպէս զի առողջութիւն տայ սիրելի հօրըս, եւ իր ամէն գործքերուն մէջ յաջողմունք ։ Կիրակի եւ տօնի օրերը առտուն զիս ժամ կը խրկէ, որ սուրբ պատարագը տեսնամ, եւ ա-

ղօթք ընեմ ։ ժամէն դառնալէս վերջը ին-
ձի նախաճաշիկ կու տայ. նոյնպէս կէսօրին
ճաշու ժամանակն ալ յարգելի ծընողա-
ցըս հետ սեղան կը նստիմ, եւ սիրելի մօ-
րըս պատրաստած կերակուրներէն ալ
կուտեմ ։ Սեղանէն վերջը կերթամ եւ
յարգելի ծընողացըս ու տունին մէջը եղած
ամէն իղմ մեծերուն ձեռքը կը պագ-
նեմ, եւ կերած կերակուրներուս համար
շընորհակալ կըլլամ. նոյնպէս իրիկ-
ւան կերակուրը ուտելէն վերջը, յարգե-
լի ծընողացըս ձեռքը կը պագնեմ, եւ Աս-
տուծոյ աղօթք ընելով եւ ինծի ըրած
բարիքներուն համար շնորհակալ ըլլա-
լով, կերթամ [illegible] անկողինս
կը պառկիմ ։

Համար. Ի ։

Աստուած վեց օրուան մէջը աշխարհը
ըստեղծեց, եւ եօթներորդ օրը հանգեաւ
գործքերէն. եւ պատուիրեց որ այն օրը

սուրբ պահել: Հին ատենը Շաբաթ օրը սուրբ պահելու էր. բայց Յիսուս Քրիստոս մեր փրկիչը աշխարհ գալէն եւ քրիստոնէութեան սուրբ հաւատքը հաստատուելէն վերջը, սուրբ առաքեալները 'ի պատիւ Քրիստոսի յարութեանը՝ Շաբաթ օրուան սրբութիւնը Կիրակիի փոխեցին. որովհետեւ Քրիստոս տէրըն մեր Կիրակի օրը յարութիւն առաւ: Բովանդակ օրը քըսանը չորս ժամ (սահաթ) ունի. այսինքն, տասներկու ժամ ցորեկ, եւ տասներկու ժամ գիշեր: Ամառուան ժամանակը ցորեկը տասներկու ժամէն աւելի կերկըննայ, եւ գիշերը կարճ կըմընայ. իսկ ձմեռուան ատենը գիշերը կերկըննայ, եւ ցորեկը կըկարճնայ: Եօթը օրը եօթնեակ (շաբթու) մը կընէ. եօթնեկին օրերը ասոնք են. Կիրակի, Երկուշաբթի, Երեքշաբթի, Չորեքշաբթի, Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ: Ե-

րեք հարիւր վաթսուն հինգ օր՝ տարի մը կընէ: Տարին տասներկու ամիս կը բաժնուի. Յունուար, Փետրուար, Մարտ, Ապրիլ, Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր: Այս ամիսներուն մէջէն, Յունուարը՝ Մարտը՝ Մայիսը՝ Յուլիսը՝ Օգոստոսը՝ Հոկտեմբերը եւ Դեկտեմբերը՝ երեսուն եւ մէկ օր ունին. իսկ Ապրիլը՝ Յունիսը՝ Սեպտեմբերը եւ Նոյեմբերը՝ երեսնական են: Փետրուարը քսանըութը օր ունի. բայց չորս տարին մէյ մը քսանըինը օր կըլլայ. եւ այն տարին երեք հարիւր վաթսուն վեց օր կունենայ, եւ կըսուի Նահանջ տարի:

Համար. խա:

Ես Հայ եմ: Հայոց ազգը անուանի ազգ մըն է: Հայերը՝ հին ատենները երեք թագաւորութիւն ունեցան. այսինքն, Հայկազուն թագաւորները՝ Արշակունիները՝ Բագ-

բաստունները և Ասուրեստանները։ Հայերը իրենց Հայկ անունով նախահայրէն յառաջ եկած են, և անոր անուամբ Հայ կանուանին։ Հայկէն ժամանակէն մինչև հիմա չորս հազար տարիէն չափ կայ։ Հայերը հազար հինգ հարիւր տարիէն աւելի է քանի որ սուրբ Գրիգոր Լուսաւորչին ձեռքովը քրիստոնեայ եղած են, և Հայոց այսօրուան եկեղեցին քրիստոնէից ուղղափառ եկեղեցիներուն մէկն է։ Ուստի ես ալ Հայ ուղղափառ քրիստոնեայ մնեմ. և ազգս ու սուրբ հաւատքս չեմ ուրանար. վասն զի իր ազգը կամ հաւատքը ուրացողը՝ վատ և անարգ մարդկան կարգը կըսեպուի, և այնպիսւոյն աստուած կըլլայ վրէժխնդիր։ Հայոց երկիրը Հայկէն անուամբ Հայաստան անուանեցաւ։ Հայաստան Ասիային մէջն է։

Համար. իբ։

Ասիան աշխարհին մէկ մասն է. որովհետև աշխարհը հինգ մաս կըբաժնուի. այսինքն,

Եւրոպա՝ Ասիա՝ Ափրիկէ՝ Ամերիկա և Նոր Հոլանտա: Հին ատենը Ասիային ժողովուրդները կրթուած կըսեպուէին, և ամէն գիտութիւն Ասիայէն կուգար և աշխարհին ուրիշ մասերը կտարածուէր: Բայց հիմա Եւրոպային ազգերը ամէն գիտութեանց մէջ Ասիային ժողովուրդներէն երևելի են: Անոնք դպրատուններուն մէջը ուսում առնելով այսչափ երևելի և անուանի եղան. ուստի ես ալ իրենց բարի օրինակին հետևելով կուզեմ ասկէ վերջը շատ ջանքով դպրատուն երթալ, և պատուելի վարժապետներուս տուած համարները առնելու:

Համար. իդ:

Ես առտուն կանուխ կելլամ. ելածիս պէս երեսս խաչ կը հանեմ և աղօթք ընելով կը հագնուիմ. և դէմքս ու ձեռքերս լուանալէն և գլուխս սանտրելէն ետքը՝ սիրելի ծնողացս ձեռքը կը պագնեմ, և դասագիրքս կառնում դպրատուն կերթամ: Դպրատուն

գնացած ժամանակս, նո՛յնպէս դուրս ելլե-լու տունս ալ, ճամբան անկարգութեամբ ասդին անդին չեմ դառնար, և կանչուըռ-տելով չեմ վազեր. այլ շիտակ պարկեշտու-թեամբ իմ բանս կերթամ: Դպրատուն մտածես պէս՝ լռութեամբ կերթամ տեղս կը-նըստիմ, և համարներս կըսերտեմ: Թէ որ պատուելի վարժապետս ինծի բան մը հարցը-նէ, ոտքի վրայ կելլամ և յարգութեամբ հար-ցուցածին պատասխանը կուտամ: Երբ որ պատուելի վարժապետս բան մը կըմեկնէ կամ կըսէ մեզի, ես սիրով կաշխատիմ այն բան-ները միտքս պահելու և կատարելու. որ-պէս զի անկարգ և անպիտան տղայոց կար-գը չանցնիմ, և ցուցակներուն մէջը դէշ նը-շանով չնշանուիմ: Կիրակի և տօնի օրերը ժամէն չեմ պակսիր, և ժամին մէջը եղած ատենս՝ ասդին անդին չեմ նայիր, այլ շի-տակ երեսս սուրբ սեղանին բռնելով ջեր-մեռանդութեամբ աղօթք կընեմ Աստուծոյ,

և շնորհակալ կըլլամ իրեն ինձի ամէն տը-
ուած շնորհներուն համար, և կըխնդրեմ որ
ծնողացս՝ վարժապետներուս՝ բարերարներուս
և բոլոր Հայոց ազգիս բարիք և երջանկու-
թիւն տայ։

Համար. իդ։

Տէրունական աղօթք։

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ եղի-
ցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. ե-
ղիցին կամք քո՝ որպէս յերկինս և յերկրի.
զհաց մեր հանապազորդ՝ տուր մեզ այսօր.
և թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք
թողումք մերոց պարտապանաց. և մի տա-
նիր զմեզ 'ի փորձութիւն. այլ փրկեա 'ի չա-
րէ։ Զի քո է արքայութիւն, և զօրութիւն,
և փառք յաւիտեանս. ամէն։

Համար. իե։

Աղօթք սուրբ Աստուածածնին։

Անկանիմք առաջի քո՝ սրբամայր սուրբ
Աստուածածին, և աղաչեմք զանարատ զկոյ-

սրբ. բարեխօսեա՛ վասն անձանց մերոց, և ա-
ղաչեա՛ զմիածին որդիդ, փրկել՛ զմեզ 'ի փոր-
ձութենէ, և յամենայն վտանգից մերոց:

Համար. իզ:

Հանգանակ հաւատոյ:

Հաւատամք 'ի մի աստուած հայրն ա-
մենակալ, յարարիչն երկնի և երկրի՝ երևե-
լեաց և աներևութից: Եւ 'ի մի տէր յի-
սուս քրիստոս որդին աստուծոյ՝ ծնեալն յաս-
տուծոյ հօրէ՝ միածին, այսինքն՝ յէութենէ
հօր: Աստուած՝ յաստուծոյ, լոյս՝ 'ի լուսոյ,
աստուած ճշմարիտ, յաստուծոյ ճշմարտէ՝
ծնունդ, և ոչ արարած: Նոյն ինքն 'ի բը-
նութենէ հօր. որով ամենայն ինչ եղև յեր-
կինս և 'ի վերայ երկրի, երևելիք և աներե-
ւոյթք: Որ յաղագս մեր մարդկան և վասն
մերոյ փրկութեան իջեալ 'ի յերկնից, մարմնա-
ցաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մա-
րիամայ սրբոյ կուսէն հոգւովն սրբով: Ո-

րով էառ զմարմին, զհոգի և զմիտ. և զամենայն՝ որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ, թաղեալ. յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ՚ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր՝ ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան: Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին՝ յանեղն և ՚ի կատարեալն. որ խօսեցաւ յօրէնս, և ՚ի մարգարէս, և յաւետարանս. որ էջն ՚ի Յորդանան, քարոզեաց զառաքեալսն, և բնակեցաւ ՚ի սուրբսն: Հաւատամք և ՚ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի: ՚Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն, և ՚ի թողութիւն մեղաց: ՚Ի յարութիւն մեռելոց. ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց: Յարքայութիւնն երկնից, և ՚ի կեանսն յաւիտենականս:

Համար. իէ:

Տղայք ինչ համարում պէտք է որ ունենան իրենց ազգին և լեզուին վրայ:

Այսօր դպրատուն գնացած ժամանակս՝ երբոր պատուելի վարժապետս ըսաւ որ վերի աղօթքները աղէկ սորուեր եմ, դարձա և ըսաւ ինծի. սիրելի որդեակ, շատ աղէկ, այս աղօթքները աղէկ սորուեր ես, ջանա ասկէ վերջը միշտ ջերմեռանդութեամբ Աստուծոյ աղօթք ընես, և անոր անհուն ողորմութեանը արժանաւորիս: Ասկէ զատ քեզի մէկ ուրիշ հարկաւոր խրատ մըն ալ տամ. դուն հիմա գիտես որ հայ ես. աղէկ նայէ որ հայութիւնդ վրայէդ չկորսնցընես, ազգակիցներդ սիրես, և ազգդ չուրանաս. ամենուն առջեւ համարձակ խոստովանիս քու ինչ ազգէ ըլլալդ, և գիտնաս թէ՝ նախ սիրելի ազգիդ համար ծներ ես աշխարհ, և վերջը քեզի համար: Քու ազգիդ օգուտը և անւանը փառաւորիլը ամենէն բանէն վեր սեպէ.

ինչու որ եթէ դուն մինակ փառաւորուիս և ազգդ վար մնայ, քու փառքդ ոչինչ կըսեպ-ւի. քանզի օտար ազգերը նախ մարդը իր ազգին անունով կըզատեն, նոյնպէս ալ իր ազգին անունով կընախատեն: Թէ որ ազ-գիդ մէջէն մէկու մը փառք բերայ, քեզի ալ կըսեպուի այն փառքը: Ջանա ուրեմն ազ-գիդ մէջը գովելի մարդ ըլլալու, և ազգիդ պատիւը աւելցնելու. ազգիդ բարեացը հա-մար գիշեր ցորեկ մտածելով աշխատելու, և քու ազգակից ընկերներուդ ձեռքէդ եկածին չափ օգնելու: Քու ազգդ սիրելի որդեակ, հին մեծանուն ազգ մըն է. իրեն ունեցած մասնաւոր պարծանքները ուրիշ ազգերը չու-նին: Ազգիդ առջի մասնաւոր պարծանքը է զի Ադամ նախահօրը դրախտին տեղը Հայ-աստանին մէջն է. որուն կը վկայեն նաև դը-րախտին մէջի եղած չորս գետերը, այսինքն՝ Եփրատ, Տիգրիս, Ճորոխ՝ որ է Փիսոն, և Երասխ՝ որ է Գեհոն, որոնք մինչև հիմա

Հայոց երկրին մէջ են: Երկրորդ՝ Նոյ նահապետին տապանը ջրհեղեղէն վերջը Հայաստանին Մասիս կամ Արարատ լեռանը վըրայ իջաւ, և ինքը՝ Նոյ նահապետը իր՝ Նեմզար անունով կնոջը հետ Հայաստան բնակեցան, և հոն մեռան ու թաղուեցան: Երրորդ՝ Հայոց լեզուն Նոյ նահապետին խօսած լեզուն է. նոյնպէս Նոյին լեզուն ալ Ադամ նախահօրը լեզուն էր. ուստի շատ ստոյգ է որ մեր Հայոց լեզուն Ադամայ լեզուն է: Չորրորդ՝ աշխարհին վրայ առաջին քրիստոնեայ թագաւորը մեր ազգէն Աբգար թագաւորը եղաւ, որ և արժանաւորեցաւ Քրիստոսի Տեառն մերոյ գրած թուղթը՝ և ընծայ խրկած աստուածային պատկերը ընդունելու:

Այս մասնաւոր պարծանքներէն զատ՝ քու ազգդ սիրելի որդեակ, ուրիշ շատ պարծանքներ ալ ունի, որոնք դուն՝ քու մայր լեզուդ և ազգին պատմութիւնը աղէկ սորուելէդ վեր-

ձը՝ դիւրաւ կրնաս իմանալ : Վասնզի ինչպէս ամէն մէկուն՝ նոյնպէս ալ քու պարտքդ է, որ՝ նախ ազգիդ որպիսութեանը և լեզուին դպրութեանը աղէկ տեղեակ ըլլաս, և վերջը ուրիշ լեզուներուն. որով ոչ միայն քու ազգակիցներուդ գովելի կըլլաս, այլ և ամէն օտար ազգերուն ալ : Իսկ ասոր հակառակը՝ մեծ ամօթ է, որ քու ազգիդ և լեզուին աղէկ տեղեակ չեղած, հետաքրքիր ըլլաս ուրիշ ազգաց լեզուին և պատմութեանը. վասն զի ազգային լեզուն ամէն տեղ ու ամէն ատեն մարդուս ինչ ազգէ ըլլալը յայտնի կիմացընէ : Որչափ ժամանակ որ ազգ մը իր լեզուն կըպահէ, իր ազգութիւնն ալ չի կորսընցըներ. իսկ ազգային լեզուն փոխելուն պէս՝ ազգութիւնն ալ շուտով կըկորսուի : Լեզուն ազգի մը ազնուութեանը վկայականն է. ինքը կորսուածին պէս՝ վկայականն ալ ձեռքէն ելած կըլլայ, և մնացականս որ այն ազնուութեանը հաւատալիք մը չըլլալէն զատ՝ ազգն ալ բա-

յորովին կըկործանի և կըփճանայ: Ջանա՛ ու-րեմն սիրելի՛ որդեակ, քու ազգութիւնդ և ազ-գիդ ազնուութիւնը պահելու համար՝ նախ քու Հայերէն մայր լեզուդ աղէկ սորվիս, և ետ-քը ուրիշ ազգերուն օգտակար լեզուներուն ալ վարժիս. որոնցմով կրնաս ժամանակաւ երևելի և անուանի մարդ ազգիդ և աշխար-հին մէջը ըլլալ: Աս վերի բանձներս սի-րելի որդեակ, աղէկ կըհաստատէ գիտական Ղ. Մինաս վարդապետը՝ իրեն շինած այս նուէր ոտանաւորին մէջը:

Ամենայն մարդոյ՝ հարկաւ պատշաճի,
նախ խօսիլ գրել՝ 'ի բուն իւր լեզուի.
Զի անպատեհ է՝ անգէտ գոլ իւր տան,
գիտել գեղեցիկ՝ թէ յայլ տան զի՛նչ կան:
Ամենայն ծնող՝ բառ իմաստ դաստան,
տացէ ընդ կաթին՝ գիր լեզու մանկանն.
Որով բառ լեզուին առնէ իւր նման,
դարձեալ ազգասէր՝ և գիտող իւր տան:
Բայց երբ հասանէ՝ 'ի չափ հասակի,
ուսցի զայլ լեզու՝ բառ իւր պաշտօնի.
Զի գրել խօսել՝ յայլևայլ լեզուի,
օգուտ մեծ գործէ՝ ամէն վիճակի:

Կարգ Ռումաներէն Այփաբետայ:

| | | | | |
|---|---|---|---|---|
| A, a. | Б, б. | B, в. | Г, г. | D, d. |
| E, e. | Ж, ж. | Z, z. | I, i. | K, к. |
| Л, л. | M, m. | N, n. | O, o. | П, п. |
| P, p. | C, c. | T, т. | Ȣ, ȣ. | Ф, ф. |
| X, x. | Ц, ц. | Ч, ч. | Ш, ш. | Щ, щ. |
| | Ъ, ъ. | Ꙟ, ꙟ. | Џ, џ. | |

Ձայնմունք տառից:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| A, | a. | ա: | Л, | л. | լէ: | X, | x. | խէ: |
| Б, | б. | պէ: | M, | m. | մէ: | Ц. | ц. | ցէ: |
| B, | в. | վէ: | N, | n. | նէ: | Ч. | ч. | չէ: |
| Г, | г. | կէ: | O, | o. | օ: | Ш, | ш. | շէ: |
| D, | d. | տէ: | П, | п. | բէ: | Щ. | щ. | շթէ: |
| E, | e. | է: | P, | p. | ռէ: | Ъ, | ъ. | ը: |
| Ж, | ж. | ժէ: | C, | c. | սէ: | Ꙟ. | ꙟ. | ըն: |
| Z, | z. | զէ: | T, | т | թէ: | Џ. | џ. | ձէ: |
| I, | i. | ի: | Ȣ, | ȣ. | ու: | | | |
| K, | к. | քէ: | Ф, | ф. | ֆէ: | | | |

# Աշխատակ

Պիւթագորեան բազմապատկութեան ։

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | անգամ | 1 | կընէ | 1. |
| 2 | „ | 2 | „ | 4. |
| 2 | „ | 3 | „ | 6. |
| 2 | „ | 4 | „ | 8. |
| 2 | „ | 5 | „ | 10. |
| 2 | „ | 6 | „ | 12. |
| 2 | „ | 7 | „ | 14. |
| 2 | „ | 8 | „ | 16. |
| 2 | „ | 9 | „ | 18. |
| 2 | „ | 10 | „ | 20. |
| 3 | անգամ | 3 | կընէ | 9. |
| 3 | „ | 4 | „ | 12. |
| 3 | „ | 5 | „ | 15. |
| 3 | „ | 6 | „ | 18. |
| 3 | „ | 7 | „ | 21. |
| 3 | „ | 8 | „ | 24. |
| 3 | „ | 9 | „ | 27. |
| 3 | „ | 10 | „ | 30. |
| 4 | անգամ | 4 | կընէ | 16. |
| 4 | „ | 5 | „ | 20. |
| 4 | „ | 6 | „ | 24. |
| 4 | „ | 7 | „ | 28. |
| 4 | „ | 8 | „ | 32. |
| 4 | „ | 9 | „ | 36. |
| 4 | „ | 10 | „ | 40. |
| 5 | անգամ | 5 | կընէ | 25. |
| 5 | „ | 6 | „ | 30. |
| 5 | „ | 7 | „ | 35. |
| 5 | „ | 8 | „ | 40. |
| 5 | „ | 9 | „ | 45. |
| 5 | „ | 10 | „ | 50. |
| 6 | անգամ | 6 | կընէ | 36. |
| 6 | „ | 7 | „ | 42· |
| 6 | „ | 8 | „ | 48. |
| 6 | „ | 9 | „ | 54. |
| 6 | „ | 10 | „ | 60. |
| 7 | անգամ | 7 | կընէ | 49 |
| 7 | „ | 8 | „ | 56· |
| 7 | „ | 9 | „ | 63 |
| 7 | „ | 10 | „ | 70. |
| 8 | անգամ | 8 | կընէ | 64. |
| 8 | „ | 9 | „ | 72. |
| 8 | „ | 10 | „ | 80. |
| 9 | անգամ | 9 | կընէ | 81. |
| 9 | „ | 10 | „ | 90. |
| 10 | անգամ | 10 | կընէ | 100. |
| 10 | „ | 100 | „ | 1,000. |